ԿԵՑ (Κετζέον) ԵՎ ՄԱԶԴԱՏ (Μαστάτον) ԱՄՐՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԷԴՈՒԱՐԴ ԴԱՆԻԵԼՅԱՆ

X դ. երկրորդ տասնամյակում Բասեն գավառը, ինչպես և Կարին (Թեոդոսուպոլիս) քաղաքը շրջապատող տարածքի զգալի մասը աստիճանաբար դուրս է գալիս արաբների տիրապետությունից, որը, բացի այլ հանգամանքներից, արդյունք էր նաև Հովհաննես Կուրկուասի և Թեոփիլոսի արշավանքների[1]*։ Ապա այդ շրջանները վեճի առարկա են դառնում Բյուզանդական կայսրության և Տայքի կյուրապաղատության միջև։*

X դ. կեսին Բասեն գավառը Մուրց գետով բաժանվում է երկու մասի՝ գետից հյուսիս ընկած մասին տիրելու էր Տայքի կյուրապաղատությունը, իսկ հարավայինին՝ Բյուզանդիան։ Այդ վիճակը պետք է փոխված լիներ 976—979 թթ., Վարդ Սկլերոսի ապստամբությունը ճնշելուց հետո, որի ժամանակ «Վասիլ թագաւորն Յունաց զԹոռնիկ զօրավարն, որ էր յազգէն Վրաց, աբեղայ ի սուրբ լերինն՝ հանեալ առաքէ առ կիւրապաղատն Տայոց Դաւիթ. և խոստանայ տալ նմա զԽաղտոյառիճ Կղէսուրան, զՋորմայրի և զԿարին, զԲասեան և զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի, զՀարք և Ապահունիս, (զորս և ետ իսկ), որպէս զի զօր առաքեսցէ, յօգնականութիւն նմա»[2]*։ Անկախ այն հանգամանքից, թե թվարկված տարածքներից որոնք էին իրականում անցնելու Դավիթ կյուրապաղատին, կամ դեռևս նվաճվելու նրա կողմից*[3]*, Կարինը և հարավ-արևմտյան Բասենը մինչև այս ապստամբությունն իրոք արդեն գտնվում էին Բյուզանդիայի գերիշխանության տակ, որոնց տիրանալու համար կայսրությունը համառ պայքար էր մղել X դ. առաջին կեսում։*

Աշոտ I-ի (886—890) և Սմբատ I-ի (890—913) օրոք Կարինը «տեսականորեն համարվում էր Հայոց թագավորության մաս կազմող քաղաք (Ibn Hauqal, *II, 343), բայց նրա արաբ կառավարիչները մեծ մասամբ ինքնագլուխ էին գործում»*[4]*։ Կարին քաղաքը կարևոր ռազմագիտական ամրու-*

---

[1] Constantine Porphyrogenitus. De Administrando Imperio. Greek text ed. by Gy. Moravcsik, English translation by R. J. H. Jenkins, Budapest, 1949, *45, 55—61 (այսուհետև՝* D. A. I.*)։ Կոստանդին Ծիրանածին, Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 15 (այսուհետև՝ Կոստանդին Ծիրանածին)։*

[2] *«Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 192։*

[3] N. Adonz. Tornik le Moine. Etudes Armeno-Byzantines, Lisbonne, 1965, *էջ 297—310։* В. П. Степаненко, Апахуник в византийско-таоских отношениях в период мятежа Варды Склира (976—979); «Античная древность и средние века» (Сборник 10, Свердловск, 1973, стр. 221—223).

[4] *Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965, էջ 159—160։ Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմամբ Սմբատ I-ի*

թյուն էր, որը գրավելու համար կայսրությունը մեծ ջանքեր էր գործադրում[5]։ Այդ իսկ պատճառով Բյուզանդիան որոշում է հենակետ դարձնել Կեցեոն ամրոցը։ Այդ մասին Միրանածինը գրում է. «Տեր Լևոն և տեր Ռոմանոս կայսրերը, ինչպես և մեր թագավորությունը բազմիցս ջանացել էին վերցնել Կեցեոն ամրոցը և այնտեղ մտցնել տաքսատոսներ, որպեսզի Թեոդոսուպոլիսը պարեն չստանա այնտեղից։ Նրանք հավաստիացնում էին կուրապաղատին և նրա եղբայրներին, որ [հռոմայեցիների կողմից] Թեոդոսուպոլիսը գրավվելուց հետո, նրանց կվերադարձվի [Կեցեոն] ամրոցը, բայց իբերները չընդունեցին այդ առաջարկը, որովհետև բարեկամական հարաբերությունների մեջ էին Թեոդոսուպոլսի (Թեոդոսուպոլսեցիների—τῶν Θεοδοσιουπολιτῶν—Է. Դ.) հետ և դեմ էին Թեոդոսուպոլիս ամրոցի գրավմանը»[6]։ Այստեղ խոսքը Ատրներսեհ I-ի (891—923) որդիների՝ կյուրապաղատ Աշոտի (923—954) և նրա եղբայրներ Դավիթի (923—937), Բագրատի (մահ. 945) ու Սմբատի (954—958) մասին է։ Նշենք, որ չնայած Կեցեոնի կապակցությամբ հիշատակվում է նաև Լևոն VI-ը, սակայն այդ ամրոցի շուրջ եղած վեճը, հավանաբար, ծագել էր սկսած Ռոմանոս I կայսեր (920—944) ժամանակաշրջանից[7]։ Այդ են վկայում Ռոմանոս I-ի և Աշոտ կյուրապաղատի մասին եղած հիշատակությունը, ինչպես նաև այն, որ Կարինի շրջակա տարածքները այդ ժամանակաշրջանից սկսել էին աղատագրվել արաբներից։ Հենց այդտեղ էլ պետք է փնտրել Կեցեոն ամրոցը[8], որի տեղադրության մասին ընդհանուր պատկերացում է տալիս Միրանածինի հետևյալ հաղորդումը. «Ավելի լավ է (ասում էին իբերները—Է. Դ.), որ կայսրը տուրմարխ կամ ինչ որ վասիլիկոս ուղարկի, թող նա նստի Կեցեոն ամրոցում և հետևի։ Նրանք [կայսրից] պատասխան ստացան, թէ ինչ օգուտ դրանից... քանի որ Թեոդոսուպոլիս ամրոցը տանող ճանապարհները շատ են, նրանք (տուրմարխը կամ վասիլիկոսը տաս-տասներկու հոգով—Է. Դ.) չեն կարող ամրոցից հետևել այդ կարավաններին, որոնք մուտք են գործում Թեոդոսուպոլիս ամրոցը։ Չէ՞ որ այդ կարավանները կարող են գիշերով մուտք գործել Թեոդոսուպոլիս, և իրենք այդ մասին լրիվ անտեղյակ կլինեն։ Իբերները չէին ուզում, որ գրավվի Թեոդոսուպոլիսը, այլ ընդհակառակը, ուզում էին, որ նա պարեն ստանա, ահա դրա համար է, որ նրանք չընդառաջեցին և չտվեցին Կեցեոն ամրոցը, հակառակ որ [կայսրից] գրավոր

թագավորության սահմանները հասնում էին մինչև Կարին («Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 161)։

5 Մ. Կանարը ենթադրում է, որ 902 թ. Թեոդոսուպոլիսը գրավվել է բյուզանդացիների կողմից („The Cambridge Medieval History", v. IV, Cambridge. 1966, էջ 715)։ Այդ երևում է 902 թ. Կարինի վրա Կատակալոնի կատարած արշավանքի մասին Միրանածինի հաղորդումից (D. A. I, 45, 50—55)։ Ինչպես կարելի է դատել այդ նույն հաղորդումից, Կարինը կարճ ժամանակով է նվաճվել բյուզանդացիների կողմից։ Իսկ Հովհաննես Կուրկուասի և Թեոփիլոսի արշավանքները (X դ. երկրորդ տասնամյակ) քիչ արդյունավետ էին Կարինը գրավելու գործում։

6 Կոստանդին Միրանածին, էջ 15, D. A. I., 45, 67—74։

7 Լևոն VI-ի (886—912) հիշատակությունը, ըստ երևույթին, արգասիք էր նաև այն բանի, որ Միրանածինը բյուզանդացիների պահանջը այդ ամրոցի վերաբերյալ ավելի խտացրած գույներով է նկարագրում։

8 Հր. Բարթիկյանը Կեցեոնի մասին ծանոթագրում է. «Հայտնի չէ, թե ո՞ր տեղին է համապատասխանում։ Հոնիգմանը հնարավոր է գտնում նույնացնել Հինդախ (պետք է լինի Հինձք—Է. Դ.) գյուղի հետ, Թեոդոսուպոլսից Տայք տանող ճանապարհի վրա կամ էլ այդ ճանապարհի լեռնանցքի վրա գտնվող մի ամրոցի, որ վրացիները կոչում են Քարթլիս ղելի (բնագրում՝ Քելի), իսկ թուրքերը՝ Գյուրջի բողազ» (նույն տեղում, էջ 233, ծան. 22)։

Երդում ստացան, թէ Թեոդոսուպոլսի գրավումից հետո այդ ամրոցը իրենց կվերադարձվի»[9]։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ Կարին ելումուտ անող քարավանները ցերեկը Կեցեոնից երևում էին և այնտեղից պարեն էր մատակարարվում Կարինին։ Տիրանածինի հազորդումից նաև հետևում է, որ Կեցեոնը պետք է գտնվեր Կարին տանող ճանապարհների հանգուցակետի մոտ[10]։

Ասվածից հետևում է, որ Կեցեոն ամրոցը գտնվում էր գյուղատնտեսական մթերքներով հարուստ Կարինի դաշտում, Կարին քաղաքի անմիջական հարևանությամբ, իսկ սա, ամենայն հավանականությամբ, համապատասխանում է Կես կամ Կէզ գյուղին[11], որը հիշատակում է Ղ. Ինճիճյանը[12]։ Այս նույն գյուղի մասին Հ. Էփրիկյանը գրում է. «Կէզ կամ Կես. — գյուղ Կարնո. 1½ ժամու ճանապարհ հեռի։ Ունի 60 տուն հայ և 20 տուն մահմետական։ Հայք երկրագործ են և ունին Ս. Մինաս անուն եկեղեցի մը և վարժարան»[13]։ Ավելի մանրամասն այս գյուղը հիշատակում է Հ. Քոսյանը. «Կէզ գյուղը Կարնո դաշտագետնոյն մեջտեղերը գտնված գյուղերեն մին է, կ'իյնա դաշտին արևմտեան կողմը։ Քաղաքին «Իլիճու» կամ «Պոլսո» անվանյալ դռնեն մինչև հոն հեռիոտն կը տևէ մեկ ու կես ժամ։

Գյուղիս անունն առնված է ըստ գյուղական ավանդության ցավալի պատահարե մը։ Կ'ըսվի թե ժամանակին բավական ընդարձակ գյուղ մը եղած է. անհիշատակ ժամանակ մը, քաղաքին հարավային կողմը բարձրացող լեռներեն «Գրրք տեյիրմէն» անվանեալ ձորամեջեն սոսկալի հեղեղ մը կու գա և գյուղին կեսը կ'առնու կը տանի և կմնա կեսը, որմե գյուղս յուր անունն ալ կ'առնու «Կես», Կէզ։

Իսկ քաղաքացին կ'ըսէ, գյուղս կը գտնվի՝ քաղաքին և Իլիճե գյուղին ճամբուն գրեթե միջավայրը, ճամբուն կեսին վրա. ուստի և անունն ալ առած է «Կես» որ և հետո բերնե բերան եղած է «Կէզ»... գյուղս ունեցած է յուր հնագույն եկեղեցին...»[14]։ Իսկ մեկ ուրիշ հատվածում գրում է. «Քաղաքին (Կա-

---

9 Կոստանդին Միրանածին, էջ 15—16, հմմտ. D. A. I., 45, 81—83 և 86—94։

10 Իսկ այն, որ այդ ամրոցը կարող էր գտնվել դաշտավայրային տեղանքում, տրամաբանական է, քանի որ դեռևս VI դ. Հուստինիանոսը, ցանկանալով Դանուբի վրա սահմանը ամրացնել, ափամերձ շրջանում, ինչպես նաև հարթավայրային տեղերում ամրոցներ կառուցեց։ Նույնը Բյուզանդիան անում էր կայսրության ասիական մասում (Ш. Диль. Основные проблемы Византийской империи. М., 1947, стр. 83).

11 Κετζέον=Κετζ+έον=կեց կամ կեց (>կես կամ կէզ)+(έ)ον, որը սովորական էր հունարեն տառադարձվող տեղանունների համար, օրինակ՝ Ἀνδάκων (Անդակ), Ζαριάκων (Զեռնակ), Ἀβνίκων (Ավնիկ) և այլն։ «Կես» կամ «Կէզ» ձևը, ինչպես ստորև կտեսնենք, արդասիք կարող էր լինել ժողովրդական ստուգաբանության։ Այդ դեպքում հնարավոր է, որ Κετζέον—կեց (>կես, կէզ)-ը այն տեղանունների շարքին դասվի, ինչպիսիք են «Կէց գիւղ», «Կեցանա յեղէգ», «Կեցանայ ձոր», «Կեցանայ վանք» («Ծուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. Բ, Երևան, 1970, էջ 1234)։ Այսուհետև կօգտագործենք «Կեց» ձևը։

12 Հ. Ղուկաս Ինճիճյան, Աշխարհագրություն չորից մասից աշխարհի, մասն առաջին, Ասիա, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 79։

13 Հ. Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հ. երկրորդ, գիրք Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1907, էջ 385։

14 Հ. Քոսյան, Բարձր Հայք, հ. Բ, Վիեննա, 1926, էջ 176—177։ Հավանաբար, բերված ստուգաբանությունները ավելի ուշ շրջանի են։ Անկախ դրանից պարզ է, որ Կեցի տեղադրությունը համապատասխանում է Կես կամ Կէզ գյուղին, որը մինչհեղափոխական 10 վերստանոց քարտեզի վրա նշված «Гез»-ն է։ Հայերենից թուրքերենին անցնելիս, ըստ երևույթին, արտաքին նմանության պատճառով, այս անունը նոր ստուգաբանություն է ստացել (rēz—աչք)։

ին-Էրզրում—է. Դ.) Իլիճու անվանյալ դռնեն դուրս ելլելով Կէզ-Իլիճե տանող կայսերական պողոտան չբռնած, ձախ թևերնուս վրա կտեսնվի սայլերու ուրիշ ճամբա մը, որ կտանի Զիֆթլիկ»[15]։

Գյուղի տեղադրության նկարագրությունից երևում է, որ այն գտնվել է Կարինի դաշտի կենտրոնական մասում, իսկ միջնադարում կարող էր լինել այդ շրջանում գտնվող գյուղերի ամրության-կենտրոնը, որտեղ վտանգի դեպքում կպատսպարվեին շրջակա գյուղերի բնակիչները։ Դրանով իսկ այն կարող էր նաև այդ գյուղերից ստացվող պարենի հավաքատեղի լինել, որտեղից պարենը առաքվում էր Կարին։ Այսպիսով, Կեց ամրոցի մեր տեղադրության օգտին, բացի անունների նմանությունից, խոսում են հետևյալ փաստերը. ա) այն գտնվում էր Կարինից այնպիսի հեռավորության վրա, որ ցերեկը այնտեղից հնարավոր էր նկատել Կարին մտնող և դուրս եկող քարավանները, բ) Կեցը Կարինին այնքան մոտ էր, որ վերջինս այնտեղից մթերք էր ստանում, գ) գտնվում էր Կարին տանող ճանապարհների հանգուցակետին մոտ, իսկ ինչպես տեսանք, Կես կամ Կէզ-Իլիճ (Էլեգիա-Ջերմուկ) ճանապարհը Կայսերական ճանապարհի մի հատվածն էր[15]։

Կեց ամրոցի մեր տեղադրությունը չի հակասում նաև այն ժամանակվա քաղաքական իրադարձություններին, որոնց մասին խոսում է Սիրանածինը։

X դ. 20-ական թվականներից, բյուզանդական արշավանքների հետևանքով, Կարինի և Բասենի առանձին շրջաններ ընկան տարբեր պետությունների ազդեցության ոլորտները։ Դրանց տարազատումը դժվարանում է նրանով, որ առանձին շրջաններում «իբերներ» էին անվանվում նաև քաղկեդոնիկ հայերը[17]։ *Կեցի իրավիճակը որոշելիս պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները. ա) այն բյուզանդացիների համար Կարինը գրավելու հարմար հենակետ էր, բ) քանի որ խնդրանքն ուղղված էր կյուրապաղատությանը, ուրեմն ամրոցն արդեն գտնվում էր վերջինիս ազդեցության ոլորտում, գ) Կեց ամրոցը գտնվում էր էթնիկապես հայկական տարածքում, որտեղի գերիշխող բնակչությունը քաղկեդոնական հայեր էին, որոնց Սիրանածինը կարող էր «իբերներ» անվանել*[18]։ *Որ Կեց ամրոցի հարցը ծագել է X դ. 20-*

---

15 *Նույն տեղում, էջ 171։*

16 *Էլեգիայով էին մեծ մասամբ անցնում հռոմեական, իսկ հետագայում բյուզանդական զորքերը Հայաստան արշավելիս։*

17 *Շատ հեղինակներ նկատել են, որ «իվեր» տերմինը վրացի նշանակելուց բացի հաճախ նշանակում էր նաև հայ քաղկեդոնական։ Ա. Պ. Կաժդանը, օրինակ, գրում է.* «Термин «ивир» мог употребляться не только как этноним, но, может быть, и для обозначения обитателя фемы Ивирия и, во всяком случае, в конфессиональном значении. В этом смысле ивирами называли также армян-халкедонитов, примкнувших к грузинской православной церкви... точно также армян, примкнувших к греческой церкви, называли иногда «ромеями» или «греками» (А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI—XII вв., Е., 1975, стр. 144). *Կարինի և Բասենի տարածքների բնակիչների վերաբերյալ «իվեր» տերմինի գործածությամբ նկատի են առնվում հայ քաղկեդոնականները։*

18 *Այս տեսակետից հետաքրքիր է Ն. Մառի հետևյալ դիտողությունը. «Միաբանության (XI դ., Պետրիծոնի—է. Դ.) կազմում էին հայ քաղկեդոնականները, որոնք դավանանքով անվանվում են վրացի... Ամեն մի հայ քաղկեդոնիկ, նույնիսկ դեռևս ավելի գրագետ հայերենում, նրա (Գրիգոր Բակուրիանի—է. Դ.) պատկերմամբ գտարյուն վրացուն հավասար վրացի է»* (Н. Марр, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, СПб., 1905, стр. 20—21).

ական թվականներից՝ բյուզանդական արշավանքների և դրանց միջև եղած դադարի ժամանակ, երևում է Ծիրանածինի հետևյալ տողերից. «...ոչ մի բնակավայր չէր մնացել ո՛չ Ֆասիանե երկրում, ո՛չ էլ Ավնիկոն (Ավնիկ) քաղաքի շրջակայքում»[19]։ Այստեղ խոսքը Կարինի 949 թ. գրավմանը նախորդած ժամանակաշրջանի մասին է։ Իսկ ո՛չ Ֆասիանեում (Բասենում) և ո՛չ էլ Ավնիկի շրջակայքում բնակավայր չէր մնացել արտահայտությունը պետք է, թերևս, ոչ թե բառացի հասկանալ, այլ՝ որ այդ շրջանները, բացի Կարինից և Ավնիկից, հիմնականում, մինչև 949 թ., արդեն ազատվել էին արաբական տարրից։ Այնուհետև, Ծիրանածինը շարունակում է. «Իբերները մշտապես բարեկամական հարաբերությունների մեջ էին Թեոդոսուպոլսեցիների, ավնիկցիների, մանցիկիերտցիների և ամբողջ պարսից երկրի հետ, բայց Ֆասիանեում նրանք երբեմն շրջանների չեն տիրացել»[20]։ Սրանից հետևում է, որ Բասենում «իբերները» (էթնիկական իմաստով) մինչև վերջինիս Բյուզանդիայի և կյուրապաղատության միջև բաժանվելը ոչ մի տիրույթ չեն ունեցել։ Դա նշանակում է, որ էթնիկական տարրը եղել է հայկական։ Այս առումով Մասատոնի[21] տեղադրությունը որոշելուց հետո, դրա հետ կապված դեպքերի մասին խոսելիս, նկատի կունենանք նաև էթնիկական այն միջավայրը, որտեղ կարող էին զարգանալ այդ իրադարձությունները։ Այստեղ միայն նշենք, որ Կեցը գտնվելով հայ էթնոսի տարածման շրջանում արաբական տիրապետության թոթափման ժամանակաշրջանում, դուրս մնալով Բագրատունյաց Հայաստանի ազդեցության ոլորտից, բնական է, որ տարբեր թելերով կապվում էր Տայքի կյուրապաղատության հետ։ Տայքի և դրանից հարավ գտնվող Կարինի, Ավնիկի և Մանազկերտի միջև եղած այդ կապերն առաջին հերթին տնտեսական էին, որոնք նոր պայմաններում չէին համապատասխանում Բյուզանդիայի շահերին։ Հիմք ունենալով Ծիրանածինի հաղորդումը Տրապիզոնի, Իբերիայի, Հայաստանի և Ասորիքի հետ[22] Արտանուջի[23] կապի մասին, պետք է ենթադրել, որ նշված ժամանակաշրջանում Կարինը նույնպես Կեցի միջոցով կարող էր մասնակցել միջազգային առևտրին, իհարկե, եթե «մշտական բարեկամական հարաբերություններ» արտահայտության տակ հասկանանք նաև առևտրական կապերը, իսկ Կեցից մատակարարվող պարենի մասին եղած հաղորդումը դիտենք իբրև նշված առևտրական հարաբերությունների կետերից մեկը։

Այսպիսով, X դ. 20-ական թվականների բյուզանդական արշավանքների հետևանքով այս շրջաններում արաբների ձեռքին միայն որոշ կղզիացած ամրոցներ էին մնացել։ Դրանցից էր, ինչպես տեսանք, Կարինը, իսկ շրջապատող տարածքի կարևոր կետերից մեկը՝ Կեցը, գտնվելով տեղացիների ձեռքում, Բյուզանդիայի և Տայքի կյուրապաղատության միջև դարձել էր վեճի առարկա։ Բյուզանդիայի և կյուրապաղատության (որին պետք է միացած լինեին նաև

---

[19] «... εἰς τὴν χώραν τῆς Φασιανῆς χωρίον οὐ συνέστη, οὐδὲ εἰς τὸ κάστρον τοῦ Ἀβνίκου (D. A. I., 45, 62—63).

[20] Կոստանդին Ծիրանածին, էջ 15։ D. A. I., 45, 64—66։

[21] Այսուհետև այս տեղանունը կօգտագործենք Մազդատ ձևով, ինչպես հիշատակում է Լաստիվերտցին («Պատմութիւն Արիստակէսի Լաստիվերտցւոյ», աշխատությամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 33)։

[22] D. A. I., 46, 42—45.

[23] Արտանուջը Կղարջքի կենտրոնն էր, իսկ Վ. Ստեփանենկոն թյուրիմացաբար այն համարում է Տայքի խոշորագույն քաղաքներից մեկը (նշվ. աշխ., էջ 221)։

տեղացիները) միջև վեճերը ավելի սուր բնույթ են ստանում Մագդատ ամրոցի կապակցությամբ։ Այս առթիվ Միրանածինը գրում է. «Ինչ վերաբերում է Մաստատոնին, ապա այն պատկանում էր Թեոդոսուպոլսին (Թեոդոսուպոլսեցիներին—τῶν Θεοδοσιουπολιτῶν—Է. Դ.)։ Մագիստրոս Հովհաննեսը յոթ ամիս պաշարել էր Թեոդոսուպոլիսը և չէր կարողացել գրավել այն, դրա համար զորք ուղարկեց և գրավեց Մաստատոն ամրոցը և այնտեղ հաստատեց պրոտոսպաթար Պետրոնաս Բոյիլասին[24], որն այն ժամանակ Նիկոպոլսի կատեպանն էր։ Պանգրատ (Բագրատ — Է. Դ.) մագիստրոսը, որ նույն մագիստրոս [Հովհաննեսի] հետ միասին արշավել էր Թեոդոսուպոլսի վրա, երբ (վերջինս—Է. Դ.) որոշեց հեռանալ, խնդրեց [Հովհաննեսին], որ [Մաստատոն] ամրոցը իրեն տա, գրավոր երդում տալով նրան, որ ինքն է դրան տիրելու, այն ոչ մի դեպքում չի զիջի սարակինոսներին։ [Հովհաննեսը] հավատաց վերոհիշյալ Պանգրատի երդումին, քանի որ նա քրիստոնյա էր, մեր թագավորության ծառան, և տվեց նրան [Մաստատոնը]։ Բայց նա նորից զիջեց այն թեոդոսուպոլսեցիներին։ Բայց երբ գրավվեց Թեոդոսուպոլիսը, իբերները մտան [Մաստատոն] և տիրացան դրանս»[25]։ Այստեղից ավելի հավաստի է դառնում Միրանածինի վերոբերյալ հաղորդումը այն մասին, որ «իբերները» բարեկամական հարաբերությունների մեջ էին Կարինի և Ավնիկի բնակչության հետ։ Քաղկեդոնիկ հայերը այնքան մոտ էին «թեոդոսուպոլսեցիների»[26] հետ, որ Բագրատի (Բագարատ) նախաձեռնությամբ Մազդատը հանձնում են թեոդոսուպոլսեցիներին, իսկ դա նշանակում է, որ նրանք նախընտրում էին ենթարկվել ինքնավար քաղաք-պետությանը՝ Կարինին, քան կախման մեջ լինել Բյուզանդիայից, որը ամեն կերպ ձգտում էր կյուրապաղատությունը ներգրավել պայքարի մեջ։ Այսպես, Ռոմանոս I կայսեր կողմից կյուրապաղատին ուղղված խրիսովուլլի մասին Միրանածինը գրում է. «Մեր աներոջ (Ռոմանոս—Է. Դ.) խրիսովուլլը վկայում է, որ մենք պաշտպանում ենք նրա (կյուրապաղատի—Է. Դ.) տիրապետության վաղեմի սահմանների ամբողջականությունը, որ եթե կարողություն ունենա, կամ մենակ, կամ մեր զորքի հետ թող պաշարի և կործանի Թեոդոսուպոլիսը և թշնամիների մնացած ամրոցները, բայց ամենևին չի ասված, որ նա կարող է նրանց լիակատար տերն ու տիրականը դառնալ»[27]։ Այս քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր Բյուզանդիայի բացարձակ գերիշխանության միտում, տևեց մինչև 944 թ., այսինքն՝ մինչև Ռոմանոս I կայսեր գահակալության վերջը։ Իսկ Միրանածինի ժամանակ Բյուզանդիան փոխում է իր քաղաքականությունը, որի մասին նշում է ինքը՝ կայսրը. «Ինչ վերաբերում է մեր թագավորության տված խրիսովուլլին, ապա դրա բովանդակությունն այն է, որ [կուրապաղատը] կամ

---

24 Բոյիլասների մասին տե՛ս Հր. Բարթիկյան. Եվստաթիոս Բոյիլասի կտակը (1059 թ.), որպես Հայաստանի և Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր («Բանբեր մատենադարանի», № 5, 1960, էջ 397)։

25 Կոստանդին Միրանածին, էջ 17—18, հմմտ. D. A. I., 45, 142—154։

26 Կարինում բացի արաբներից նաև պետք է մեծ թվով հայեր լինեին։ Ուշագրավ է, որ նույնիսկ XIX դ. սկզբին Ղ. Ինճիճյանը Կարինում ոչ մեծ թվով հայախոս հույներ է հիշատակում, որոնք, ըստ երևույթին, քաղկեդոնիկ հայեր էին, «(Էրզրումում—Է. Դ.) ունին և հոյնք մի միայն եկեղեցի աղքատիկ Սբ. Գէորգ. քանզի սակաւ են յոյժ իբրև 15 տունք, որք և խօսին առհասարակ հայերէն» (նշվ. աշխ., էջ 69)։

27 Կոստանդին Միրանածին, էջ 16—17, D. A. I., 45, 119—124։

նրա եղբորորդի մագիստրոս Ադրանասեն, սեփական ուժով ինչքան որ հազարացիներին պատկանող շրջաններ կարողանա իրեն ենթարկել, կամ ապագայում կենթարկի, ապա թող դրանց տերն ու տիրականը դառնա»[28]։ Ամենայն հավանականությամբ, տեղական տարրը կյուրապաղատության հովանավորությամբ որոշ չափով ինքնիշխան էր դարձել, տնօրինում էր սեփական գործերը և Բյուզանդիայի կողմից «ազատագրման» կարիք չէր զգում։ Ըստ երևույթին, Տիրանածինը չգիտեր, թե այնտեղ ինչ էթնիկական տարրի հետ գործ ունի։ Ինչպես վերը նշեցինք, այդ շրջաններում էթնիկապես ոչ թե իբերական, այլ հայկական տարրն էր, ուր զգալի թիվ էին կազմում քաղկեդոնիկ հայերը, որոնք բոլոր թելերով կապվել էին Կարինի և Ավնիկի հետ, և որտեղ գերիշխող բնակչությունը, չնայած արաբների տիրապետության առկայության, նույնպես հայկական պետք է լիներ։ Այնպես որ, բնականորեն, նշված «իբերները» (գերազանցապես քաղկեդոնիկ հայերը), Տայքի կյուրապաղատության հովանավորությամբ, այդ ժամանակաշրջանում արդեն տիրում էին Կարինի և Ավնիկի մերձակա շրջաններին և, փաստորեն, Տիրանածինն իր խրիստվուլով վավերացնում էր այդ վիճակը։

Մազդատը, ինչպես և Կեցը, Տիրանածինի վկայությամբ, պետք է գտնվեր Կարինից ոչ հեռու։ Մազդատի տեղադրության մասին Ղ. Ալիշանը գրում է. «Յելից Ալիպազիրկեանի առ հզօր վտակաւ՝ որ իբր ժամաւ 'ի բացեայ 'ի Հասանկլայէ խառնի յԵրասխ, և իբր ժամաւ 'ի Հր. Ալվարայ՝ նշանակի Մասսադ գիւղ, որ ինձ թուի հինն Մազդատ բերդ. յոր անկեալ ապաւինեցաւ Վասիլ կայսր յամի 1022, յորժամ բանակեալ էր 'ի կողմանքս, և ոմանք յիշխանացն խորհեցան ապստամբել 'ի նմանէ և թագաւորեցուցանել զՆիկեփոր, ղորդի Տովիզն անուանեալ Փոկասու, այլ ոչ յաջողեաց նոցա. քանզի, ըստ պատմութեան մերոյս Արիստակեայ Լաստիւերտցւոյ, մի 'ի խորհրդակցացն՝ Սենեքերիմ Դաւիթ՝ երբեմն թագաւոր Արծրունեաց[29], ստրջացեալ հնարեցաւ կալաւ սպան զբռնաւորն, և առաքեաց զգլուխ նորա առ կայսր, որոյ հրամայեալ 'ի վերայ ձողոյ բարձրացուցանել զայն 'ի տեսիլ ամենեցուն, ելեալ մեկնեցաւ յարգելանէն»[30]։ Ըստ Տիրանածինի հաղորդման, Մազդատը Կարինից հեռու չէր, ուրեմն Ղ. Ալիշանի ենթադրությունը[31] հաստատվում է։ Հոնիգմանը[32] և նրա հետևորդները[33] ծանոթ են եղել թե՛ Տիրանածինի, և թե՛

---

28 Կոստանդին Տիրանածին, էջ 17, D. A. I., 45, 124—127։

29 Կ. Յուզբաշյանը նշում է, որ «իրականում Նիկեփորին սպանեց ոչ թե Սենեքերիմ Արծրունին (որը դավադրության մեջ չի մասնակցել), այլ նրա որդի Դավիթը («Повествование вардапета Аристакэса Ластивертци», пер. с древнеармянского, вступительная статья, комментарии и приложение К. Н. Юзбашяна. М., 1968, стр. 148, прим. 6).

30 Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, Ս. Ղազար, 1890, էջ 23—24։

31 Ի տարբերություն Ղ. Ալիշանի, կարծիք է հայտնվել, որ Մազդատը գտնվել է Խաղտիքում (Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, առաջաբանը և ծանոթագրությունները Գ. Մ. Մանուկյանի, Երևան, 1971, էջ 118, ծան. 43)։

32 E. Honigmann, Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071, Bruxelles, 1935, էջ 164։

33 Հ. Բարթիկյանը գրում է. «Տեղը հայտնի չէ։ Հոնիգմանը տեղադրում է Ավնիկի մոտ» (Կոստանդին Տիրանածին, էջ 234, ծան. 33)։

Լաստիվերտցու[34] հաղորդումներին, սակայն Մազդատի տեղը նշում են Արաքսից հարավ՝ ինչ-որ վայրում։ Արիստակես Լաստիվերտցու մի այլ հաղորդմամբ՝ Ղ. Ալիշանի Մաստատոն (Մազդատ)—Մասսադ[35] տեղադրությունը ավելի է հաստատվում։ Նա գրում է. «Յետ այսորիկ իշանէ Թագաւորն զօրօքն յնդարձակ դաշտն Բասենոյ, և առաքէ հեծեալս ի հեթանոսական զօրացն կալանաւորս ապստամբին Փերսի. և ինքն խաղացեալ հասանէ ի սպառուածն Բասենոյ, ի տեղւոջն որ կոչի Սալքորայ...»[36]։

Ինչպես տեսնում ենք, Վասիլ II-ը Մազդատից ուղևորվում է Սալքորա։ Մազդատի և Սալքորայի[37] միջև տարածությունը մեծ չէ, երկուսն էլ Բասենում են։ Լաստիվերտցին հատուկ նշում է, որ կայսրը իջնում է Բասենի դաշտը։ Այս վերջին վկայությունը խոսում է այն մասին, որ Բասենի լեռնային շրջանից կայսրը իջնում է Երասխի և նրա վտակ Մուրցի հովիտը, ուր նա կարող էր դալ Մազդատից։ Ուրեմն, այս ևս մի փաստարկ է հօգուտ Մաստատոն—Մազդատ—Մասսադ տեղադրության։

Այսպիսով, Կեց և Մազդատ ամրոցների տեղերը որոշելով[38], առավել ևս ակնհայտ է դառնում Բյուզանդիայի ձգտումը՝ տիրելու արաբներից նվաճված տարածքը։ Կոստանդին Տիրանածին կայսրը տեսնելով, որ ամրոց ամրոցի հետևից անցնում է տեղացիների ձեռքը, իսկ սրանք էլ անցնում են Տայքի կյուրապաղատության քաղաքական ոլորտը, որոշում է արաբներից ազատագրված տարածքների բաժանում կատարել։ «Ահա պարզ է,— գրում է Տիրանածինը,— որ [իբերները] ո՛չ Մաստատոն ամրոցը և ո՛չ էլ Ավնիկը պահանջելու իրավունք ամենևին չունեն, բայց որովհետև կուրապաղատը մեր հավատարիմ և հլու ծառան է և բարեկամը, ահա նրա խնդիրքին [ընդառաջեցինք], որ Ֆասիանեի սահմանը էրաքս, այն է Ֆասիս գետը դառնա, ձախ կողմում դեպի Իլլիրիա[39] տարածվող շրջաններին տիրեն իբերները, իսկ աջ կողմում մինչև Թեոդոսուպոլիս ընկած շրջանները, ամրոցները և վայրերը գտնվեն մեր թագավորության տիրապետության ներքո, և գետը լինի երկուսի միջև սահման։ Երանելի Հովհաննես Կուրկուասը իր կենդանության ժամանակ, երբ այդ մասին հարց տվին, պատասխանեց, թե ձեռնտու է, որ գետը լինի սահման։ Եթե հարցին արդար մոտենանք, ապա կուրապաղատը (Աշոտը— Է. Դ.) ոչ մի իրավունք չունի տիրելու գետի այս կամ այն կողմին, քանի որ Թեոդոսուպոլսի այդ բոլոր շրջանները մեր թագավորության զորքերը գրա-

---

34 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», էջ 33։

35 Մինչհեղափոխական ռուսական 10 վերստանոց քարտեզի վրա այդ բնակատեղին անվանված է Массаб, որը վրիպակ է։

36 «Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ», էջ 35։

37 Սալքորայի տեղադրության մասին տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 79։ Մինչհեղափոխական ռուսական 10 վերստանոց քարտեզի վրա այն համապատասխանում է Салькори գյուղին։

38 Տե՛ս սույն հոդվածին կից քարտեզը։ Մազդատը այն ամրություններից էր, որոնք գտնվում էին Կարինից արևելք, հյուսիսից հարավ գրեթե մի գծի վրա, և, թերևս, գոյություն ունեին Հայաստանի պարսկա-բյուզանդական բաժանումից սկսած։

39 Գ. Լասկինը (Сочинение Константина Багрянородного «О фемах» и «О народах». с пред. Гавр. Ласкина, М., 1899, стр. 167), հետևելով Բրոսեին Ἰλλυρίαν ուղղում է Ивирия, իսկ Gy. Moravcsik-ը միայն տողատակում նշելով Բրոսեի և Լասկինի կողմից առաջարկված ուղղումը (D. A. I., էջ 213), տեքստում բերում է ըստ R. Jenkins-ի թարգմանության, ուր այն մնացել է Illyria։ Ճիշտը Իլլիրիա ձևն է։

վեցին և հրդեհեցին, իսկ իբերները ոչ մի անգամ առանց մեր զորքին [միանալու] առանձին արշավանքի դուրս չեն եկել և ավարի չեն առել Թեոդոսուպոլիսը։ [Ընդհակառակը], նրանք միշտ բարեկամ են համարել և առևտուր արել [Թեոդոսուպոլսեցիների] հետ, խոսքով ցանկանում էին, որ Թեոդոսուպոլիսն ընկնի, բայց իրականում երբեք էլ չեն ցանկացել, որ այն գրավվի։ Բայց մեր թագավորությունն, ինչպես ասվեց, սեր տածելով դեպի կուրապաղատը, համաձայնվեց, որ էրաքս, այն է Ֆասիս գետը դառնա երկուսի միջև սահման։ [Իբերները] պարտավոր են բավարարվել իրենց ունեցած տիրույթներով և ավել բան չպահանջեն»[40]։



«De Administrando Imperio» *գործը Միրանածինը գրել է 948—952 թթ. միջև*[41]։ *Ուրեմն, Բյուզանդիան կյուրապաղատության իրավունքները Բասենի մի մասի վրա ճանաչել էր Կարինի (949 թ.) նվաճումից հետո՝ 950—952 թթ. միջև։ Դա նախ պայմանավորված էր այն հանգամանքով, որ կայսրությունը վավերացնում էր իր տարածքային նվաճումները*[42] *և երկրորդ, եթե Բյուզանդիան նման քայլի չդիմեր, ըստ երևույթին, կկանգներ այլ բարդությունների առջև։ Դեռևս արտաքին վտանգը չէր անցել և, բացի այդ, կյուրապաղատությունը Կարինի և Բասենի քաղկեդոնիկ հայերի օգնությամբ կարող էր ավելի ընդարձակվել։ Բյուզանդիան արաբներից ձեռք բերած տարածքներում հանդես էր գալիս որպես տեր և տնօրեն, իսկ մյուս մասի վրա իրեն էր վերապահում*

40 Կոստանդին Միրանածին, էջ 18, D. A. I., 45, 155—175։

41 D. A. I., էջ 9։

42 *Այս ժամանակաշրջանում տնտեսական, դավանանքային և էթնիկական տեսակետից նշված տարածքի միացումը Տայքին պետք է ավելի բնական համարել, քան մյուս հատվածի միացումը Բյուզանդիային, որը միայն կարելի է դիտել որպես քաղաքական էքսպանսիա։*

սյուզերենական իրավունքներ։ Այսպիսով, Բյուզանդիայի ռազմական և դիվանագիտական միջոցները ծառայում էին մի նպատակի՝ նվաճման։ Բռնի նվաճումը վավերացվում էր դիվանագիտական ճանապարհով կամ արտաքուստ թվացող անարյուն դիվանագիտական նվաճման ետևում կանգնած էր ռազմական ուժը։

Ասենք, որ «էրաքս» կամ «Ֆասիս» գետը, որի մասին խոսում է Տիրանածինը, որպես սահմանի, ավելի շատ համապատասխանում է Երասխի (Արաքս) վտակ Մուրցին[43]։ Դրանից հյուսիս տիրելու էր կյուրապաղատությունը մինչև Ἰλλυρία, որը տվյալ դեպքում համապատասխանում էր Բռնակապանի և Բասենի արևմտյան սահմանի միջև ընկած տարածքին։ Ինչպես հայտնի է, Բռնակապանը նշանավոր էր որպես խոշորագույն «կղեսուրք»։ Սրա և Բասենի միջև ընկած լեռնային շրջանը ամրացված լեռնանցքների դոտի էր, ուրեմն Ἰλλυρία—Աղորի էր, այսինքն՝ ամրացված լեռնանցքների շրջան, այնպիսիք, ինչպիսիք կային Հայաստանի լեռնային շրջաններում[44]։

Թե որքանով էր Բյուզանդիան «սեր» տածում կյուրապաղատի հանդեպ այդ բաժանումը կատարելիս, կարելի է տեսնել մի փաստից, որտեղ Տիրանածինը ինքն իրեն հակասում է։ Ինչպես նշվեց, ի տարբերություն Ռոմանոս I կայսրի խրիսովուլի, Կոստանդին Տիրանածինինը Տայքի կյուրապաղատին կամ նրա եղբորորդի Ադրամասեին իրավունք էր վերապահում տեր ու տիրական դառնալ այնտեղ, ուր նրանք սեփական ուժով իրենց կենթարկեին արաբներին պատկանող շրջաններ։ Անկախ այն հանգամանքից, որ Բագրատ մագիստրոսն էր հանձնել Թեոդոսուպոլսեցիներին Մազդատը, քանի որ բյուզանդացիների կողմից Կարինը գրավվելուց հետո իբերները նորից էին վերագրավել այն, ապա, ըստ Տիրանածինի խրիսովուլի, ամրոցը պետք է պատկաներ իբերներին։ Եվ եթե Մազդատի դեպքից հետո կայսրը «ներել էր» կյուրապաղատությանը, որովհետև վերջինիս հետ դեռ շարունակում էր հույսեր կապել արաբների դեմ մղվող պայքարում, ուրեմն պետք է նաև հանդուրժեր Մազդատի գրավումը տայեցիների կողմից, որը, ամենայն հավանականությամբ՝ իրագործվել էր տեղացիների ակտիվ մասնակցությամբ։ Բայց հարցը այլ կերպ էր դրվում։ Կայսրությունը ամենևին չէր հանդուրժում այդ։ Ինչպես երևում է կայսրի նշումից, նա գտնում է, որ իբերները «ո՛չ Մաստատոն ամրոցը և ո՛չ էլ Ավնիկը պահանջելու իրավունք ամենևին չունեն»[45]։ Ուրեմն

---

43 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1973, № 10, էջ 67։

44 Այդպիսիք են՝ Տիգրիսի վերին հոսանքների շրջանում հիշատակվող Ավլորը, Հավնունիք գավառում այժմյան Ղզել-Դերբենդ և Կարա-Դերբենդ լեռնանցքների շրջանը և Երասխի արմունկի շրջանում Աղորի աշխարհը Հավճիշ բերդով և այլն։

45 Որ Ավնիկը հպատակվել էր բյուզանդացիներին, երևում է Տիրանածինի հետևյալ հաղորդումից. «Զորավար պատրիկ Թեոփիլոսը բազմիցս դիմեց ամիրային. վերջինս տեսնելով, որ փրկության ոչ մի հույս չի մնացել, հպատակվեց, համաձայնվեց դառնալ մեր Թագավորության ծառան և որպես պատանդ տվեց իր որդուն» (Կոստանդին Տիրանածին, էջ 17, D. A. I., 45, 139—142)։ Տիրանածինը նաև հաղորդում է, որ Տայքի կյուրապաղատը իրավունք չունի տիրելու Ավնիկ ամրոցին այն պատճառով, որ այն «մինչև օրս էլ ինքնիշխան է և անկախ, ունի սեփական ամիրա...» (Նույն տեղում, էջ 17, D. A. I., 45, 130—132)։ Ուրեմն Ավնիկը Բյուզանդիայի կողմից դիտվում էր որպես հպատակ, իսկ կյուրապաղատությանը ներկայացվում էր որպես ինքնիշխան և անկախ ամիրայություն։ Դրա նպատակն էր կյուրապաղատությանը ետ պահել այն տիրելուց։ Ակներև է, որ կայսրությունն ամեն կերպ ձգտում էր սահմանափակել կյուրապաղատության ընդարձակումը։

այս ժամանակաշրջանում Մաղդատը վեճի առարկա էր կայսրության և կյուրապաղատության միջև։

Այսպիսով, Բասենի Մուրցից հյուսիս ընկած մասը անցնում էր կյուրապաղատությանը, իսկ հարավը՝ կայսրությանը։ Այնպես որ, Վասիլ II-ի խոստումը Դավիթ կյուրապաղատին՝ այլ հողերից բացի տալ նաև Բասենը, կարող էր վերաբերել միայն Մուրցից հարավ ընկած մասին։ Ուրեմն հաստատվում է Ասողիկից բերված հատվածի պատմականությունը, քանի որ Վասիլ II-ը իրոք Դավթին խոստանում է այն հողերը, որոնք հիմնականում կայսրությանն էին պատկանում՝ «խաղտոյառիճ կղէսուրաս», որը բացի խաղտոյառիճից և Բռնակապանից, իր մեջ ընդգրկում էր մինչև Բասենի արևմտյան սահմանը ընկած լեռնային ամրոցների շրջանը (որը Միրանածիներ անվանում է Իլլիրիա) և «զՁորմայրի և զԿարին, զԲասեն»։ Վերջինս Մուրցից հարավ ընկած տարածքն էր, որի շարունակությունն էր «զՍևուկ բերդակ, որ է Մարդաղի»։ Ինչ վերաբերում է խոսացած «զՀարք և Ապահունիս» շրջաններին, ապա սրանք իրոք դեռևս ենթակա էին նվաճման։ Սակայն Վասիլ II-ի խոստման մեջ, այդ վերջիններիս կապակցությամբ, արտացոլվել է Կոստանդին Միրանածինի վերը նշված խրիսովուլից բխող այն թեզը, որ Տայքի կյուրապաղատությունը կարող էր աեր և տիրական դառնալ արաբներից նվաճված հողերի վրա։ Իսկ տվյալ տարածքի կապակցությամբ Բյուզանդիայի կայսրի նման խոստումը բխում է այն քաղաքական սկզբունքներից, որի համաձայն հայերը և նրանց երկիրը դիտվում էին կայսրության հպատակներ[46]։

Այսպիսով, X դ. Բյուզանդիան թե՛ ռազմական և թե՛ դիվանագիտական շատ միջոցներ գործադրեց վերականգնելու այն վիճակը, որ գոյություն ուներ Բյուզանդիայի արևելյան սահմանամերձ շրջաններում և հատկապես Հայաստանում՝ մինչև արարական նվաճումները, պարսկա-բյուզանդական բաժանումներից հետո և հասավ իր նպատակին. նույնիսկ ավելին՝ Մելիտինեին (934 թ.), ապա Սամոսատին[47] հետևում են Կարինի (949 թ.) և Բասենի մի մասի գրավումը (մինչև 952 թ.), 966 թ. Տարոնի[48], իսկ հետագայում՝ Տայքի կյուրապաղատության և Հայաստանի մի շարք այլ շրջանների նվաճումը։

ЛОКАЛИЗАЦИЯ КРЕПОСТЕЙ КЕЦ (Κετζέον) И МАЗДАТ (Μαστάτον)

ЭДУАРД ДАНИЕЛЯН

Резюме

С 20-х годов X в. борьба Византии против арабских эмиратов в Армении обостряется. В этой борьбе византийцам необходимо было овладеть крепостью Кецеон (Кец), которая локализуется нами на мес-

---

46 Հմմտ. Կ. Յուզբաշյան, Բագրատունյաց շրջանի Հայաստանը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից («Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 1, էջ 40—41)։

47 «История Византии», т. 2, М., 1967, стр. 190.

48 Ասողիկ, էջ 183։ Ամենայն հավանականությամբ, Ասողիկի հաղորդումը վերաբերում է Տարոնի արևմտյան մասին, իսկ մնացած՝ հիմնական տարածությունը մի առ ժամանակ շարունակում էր մնալ տեղական իշխանական տան ձեռքում, որը հայ Բագրատունիների կենտրոնական իշխանության քաղաքական ոլորտում էր գտնվում։

те селения Кес или Кез (в современном произношении), к западу от Эрзерума (Карин—Феодосиополь). Другой важной крепостью, согласно сообщению Константина VII Багрянородного, была крепость Мастатон, соответствующая Маздату, упоминаемому Аристакэсом Ластивертци. Г. Алишан предположительно локализует Маздат на месте населенного пункта Маосад, к востоку от Эрзерума, что подтверждается данными Константина Багрянородного.

Хрисовул Романа I Лакапина запрещал куропалату Тайка владеть теми крепостями, которые освобождались от арабов тайкскими или объединенными тайкско-византийскими войсками. Хрисовул же Константина Багрянородного предписывал куропалату Тайка и его племяннику владеть теми областями, которые освобождались от арабского владычества, однако император проявил непоследовательность в этом вопросе. В исследуемый период Тайкское куропалатство и области Басена и Карина вели совместную борьбу против притязаний Византийской империи на освобожденные от арабов территории в пределах этих областей. В середине X в. империя признала за Тайкским куропалатством право владения землями Басена, лежащими к северу от р. Аракс и ее притока Мурц.